Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի << Տալվորիկի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի դասվարի (21 դասաժամ), երաժշտություն(7դասաժամ), կերպարվեստ(7դասաժամ), ֆիզկուլտուրա(12 դասաժամ), տեխնոլոգիա(2 դասաժամ), ՆԶՊ (1 դասաժամ, 0,5 դրույք զինղեկ) առարկաների ուսուցիչների թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024 թվականի հունվարի 9-ից մինչև հունվարի 22-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 թվականի հունվարի 24-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի << Տալվորիկի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում. հասցեն՝ Արմավիրի մարզ, գ.Տալվորիկ :

Տեղեկությունների համար զանգահարել (094) 159 132 հեռախոսահամարով:

<< Տալվորիկի հիմնական դպրոց>>ՊՈԱԿ-ի տնօրենություն